

ՀԱՅ – ԱՂՈՒԱՆ

Առանց – Նութ
Առաջի – Բէշ
Ի ներքոյ – Թուսեխ
Ի վերայ – Լախոյ
Ընդ – Խօլ
Մերձ – Իշա
Մինչեւ – Տրիկ
Առանել քան – Խալ
Հեռի – Ախիւ
Գաղտ – Ջապիկ
Ջոկեմ – Ջապիկ
Սերմանեմ – Տիւլալ
Թօթափեմ – Ցափտալ
Ամամ – Տիկալ
Որսամ – Օխալալ
Բառնամ – Աղալ
Մուրամ – Պէսալլուդալ
Հեղում – Պիգալ
Հերձում – Ղզալալ
Լիզում – Լամալ
Լեսում – Խարիպալ
Արգելում – Թէգալարգոյ

ՀԱՅ – ԱՂՈՒԱՆ

Մեղր – Ուճ
Գիմի – Ֆի
Հաշ – Խուս
Դամակ – Մէ
Թուր – Մերան
Դրգալ – Մալակա
Գաւաթ – Այաղ
Ասեղն – Բեք
Արկղ – Սանտուղ
Արեգակն – Պեղ
Բաղցր – Մուճա
Թամար – Պօչու
Բարձր – Ալա
Անուր – Պախիկ
Օն, հապա – Ուսենպա
Ամփոփեմ – Կիրպալ
Բժշկեմ – Շիւլալ
Ըմբռնեմ – Պիղալ
Տաշեմ – Քիշկալ
Ծամեմ – Գաճկալ
Սպանանեմ – Պէսպալ
Հնձեմ – Էխպալ

ՀԱՅ – ԱՂՈՒԱՆ

Ագրաւ – Ղաշնա
Ձուկն – Ջալի
Կով – Ջուր
Եզն – Ուս
Կիմն – Պօղդ
Նապաստակ – Ղու
Գայլ – Ուլ (դայլոյ)
Ուղտ – Պուշ
Ձի – Էխ
Շուն – Խա
Լուսին – Նախուսպուղ
Աստղ – Ղապուն
Գարուն – Ժողիլ
Տիւ – Ղենախուն
Կէսօր – Պլաշար
Ամ – Ուսէն
Ձիւն – Իժ
Ամպ – Հասոյ
Նոր – Ինի
Բաց ի – Ջոք
Շուրջ – Պիպամէն
Առ – Ջամանակա

Ա.– Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, ամէն:

Ձի Պափայ կա Այլուն կա Էլմոյ իվէլ, Լիկիր:

Բ.– Լաւ է մարդոյ ի սովոյ մեռանել, քան անկանել ի ձեռս անօրինաց:

Շեւէ իշէյ պուսիսոյ պիյանէ, կէյին պաֆթանէ քէխ եաղախօտօ:

Գ.– Պարտ է մեզ երկնչել յԱստուծոյ, այլ եւ ահիւ եւ երկիւղիւ կալ յաղօթս:

Կեարաքնէյա զիփսուն Պիխաղօթօ, բուրան զիփսունէն կա տուտուփսունէն ալ տուին ալ մանտի:

Ֆ

Ջայսքան քաղեալ, մանաւանդ թէ դադափարեալ, ի յիշելոյ քե-
րականէդ, զստուգութիւն եւ զհաւատարմութիւն ձայնիցն ապաս-
տան առնեմք ի նոյն. շատ համարեալ մեզ այսքան ի սէր ծանօթու-
թեան ազգի հռչակելոյ ի հնումն եւ այժմ անծանօթ եղելոյ, ստերիւր-
եալ ի կարդէ բանիցս՝ առ որ դարձ արասցուք, սուղ ինչ եւ զկրօնից
եւ զքահանայեանաց կամ զկաթողիկոսաց Աղուանից նշանակեալ. որ
մի յինքնազլուի աթոռոց ծանուցաւ յարեւելս, եւ հնութեամբ եւ
անընդհատ կարգաւ յաջորդաց նշանաւոր:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓՇՐՈՒԱԾ ՔՆԱՐ

(ԵՂԵՐԵՐԳ ԴՈՒՐԵԱՆԻ)

ԱՌԱՋԻՆ ԵՂԱՆԱԿ

ԱՍՏՂԵՐՈՒ ԺՊԻՏԸ

Ի՛նչքան կայտառ եւ երազի պէս ժպտուն
Կը ծաղկէր վարդը դարնան.
Աստղեր հողւոյն մէջ կ'այրէին, սէր անհուն,
Գըթութեան աչքն աննըման:

Կաթնափրփուր ի՛նչ ճերմակով էր օծուած
Ճանապարհն իր արջունի.
Ջոյգ կողերէն դալարիքներ առկախուած
Երջանկութեան էր ուղի:

Սրտին վըրայ առուակն երգով կը հոսէր,
Անոյշ ցօղով յուզումի.
Եւ կ'երկարէր անոր ափին հիւրասէր
Դողդոջուն թեւ շուշանի:

Օր մ'ալ եկան մըռայլ ամպեր
Արտասուադին...
Տրտում աչքեր անձրեւեցին իր հոգին,
Ինկան աստղեր վիհին մէջ,
Ու պատանի քերթողն այրած, վիրաւոր՝
Քալեց ճամբէն փուշերու...
Վէրք մ'ալ էր աչքն արեւու...:

ՏԻՐԱՆՈՅՇ ՏԵՍԻԼՆԵՐ

Տխրանոյշ տեսիլներ անմարմին
Գծուած են աչքերուն դէմ սարսուռ.
Կը վառի սրտին մէջ թախծադին
Ապրելու կարմիր տենչ ու կարօտ:

Բուրուժներ ծաղկավառ ու թրթռուն
 Կը շնչեն ու կ'երգեն խելագար,
 Եւ մատներ զեփիւռի մը զգայուն
 Կ'որորեն պատանին մեղմավար:

Վերյիշում ու պատկեր տենչալի
 Կը բանան, կը դոցեն ապագան.
 Արշալոյս, ոսկի շող երազի
 Սրտին վրայ կը ծաղկին յարաժամ:

Թափանցիկ իր հողին կը ցոլայ
 Բընութիւնն ու սէրերը ծըփուն,
 Իզճերու հայելին շափիւղայ
 Կը փայլի ու կ'իյնայ բեկբեկուն:

Եւ երա՛զը կ'ապրի, կը սպառի
 Ներգաշնակ յուզումով քընարի:

ԳԱՂՏՆԻՔ

Աստղերուն հետ մեղրածորան
 Դալուկ լուսինն յար կու լար.
 Տըխեղծ, լացող իր մանկութեան
 Պատկերն ափին կը հեւա՛ր:

Ալեմտաղէն կու գար շոյել
 Զեփիւռն անոյշ իրիկուայ,
 Ու կը հիւսէր միշտ ոսկեթել
 Կեանքի հէքեաթն արծաթեայ:

Համբոյր տալով իր ճակատին
 Կը փախչէր հովն, սէր անմեռ,
 Եւ մտնելով խորն անտառին,
 Գաղտնիքն ամուր կը պահէր:

Աչքե՛ր աղուոր, հրդեհ ու բոց,
 Սրտին վրայ կ'այրէին.
 Ազամանդէ արցունք ու խոց՝
 Աստղերն էին իր կեանքին:

ՅԱԳՅԱՅԻՆ ՀՍԿՈՒՄ

Յայգային հսկումներ կ'արիւնին
 Գիշերուան լուսեան մէջ անժըպիտ.
 Կ'արթննայ յիշատակն անցեալին,
 Երազն է, կը ցնդի շիթ առ շիթ:

Ու գոցուած է ճամբան ցանցերով,
 Կ'արտասուեն ուռիներ շիրմափակ.
 Ըստուերներ մարմնոյն պինդ փարեւով՝
 Կը տանին ուղիներ վայրահակ:

Սրտովս, ա՛խ, գրկէի հէգ տըղան,
 Տանէի ջինջ ափեր ծիծաղիտ,
 Յոյց տայի սրտաբաց նոր ճամբան,
 Բանալով լոյս կեանքի մ'առաւօտ:

Ճառագայթ մը ինկած երկնքէն
 Պարտէզին մէջ տըտում հողիին,
 Ըլլար շող մը ժպտուն հաւատքէն,
 Պատուանդան անխոտոր վերելքին:

Թափանցիկ ձեռք մ'ա՛խ ես ըլլայի,
 Եւ գըթոտ թովանքով գրկած դայն՝
 Տանէի սիրոյ վայր մ'ամայի,
 Որ չտեսնէր ո՛չ մահ, ո՛չ գերեզման:

ՇՈՂԵՐ, ՇՈՂԵՐ

Շողե՛ր, շողե՛ր
 Կը ծաղկէին հորիզոնին վրայ յուռթի,
 Գոյնի ծով մ'էր արշալոյսն իր ծաղկատի
 Բեղուն պարտէզ երազի:

Շողե՛ր, շողե՛ր
 Արծաթ ցոլքով կ'այրէին, շաղ թափանցիկ...
 Եւ լուսեղէն կամարէն վեր մըտերմիկ
 Յայգալոյսներ հողիի:

Ի՞նչ ծաղկազարդ
Վերապրումներ հին օրերու հեշտանքին...
Եւ հողեկան ողբերգութեան ծրփանքին
Անըրջական ուկէան:

Լացող քնարին
Լարերով թող լեցուի սափորն իմ սրտի,
Շողերու երգն ու բեկբեկում հոն կաթի
Ու վերանամ քերթութեամբ:

Բայց կ'արտասուէ
Ալիքներովը լըճակին՝ քերթողն հէգ,
Կը վէտվէտի սիրտը ծրփուն եւ անդեկ
Գալարումով դայրագին:

Հովին ձայնն է
Որ կը հնչէ ծառերուն մէջ տրամօրէն
Ու գըզուանքի պէս կը փարի շատ մօտէն
Իր թափառող հոգիին:

Շողեր կ'իջնեն
Վերջալոյսի ժլպիտներէն լուսածամ,
Ու կը պատեն հորիզոնները փարթամ
Գոյնի կախարդ քերթողին:

ՓՐԹԱԾ ԼԱՐԵՐ

Լիալուսնին տակ սիրտը սիրով օրօրուն
Քանի, քանի՞ գիշերներ
Երգեց իր վէրքը պատրանք, վիշտ տոչորուն,
Լարով սրինդին մենասէր:

Լացաւ քերթողն աղեկըտուր ողբերով
Խաւարին մէջ յուսահատ.
Հեւա՛ց տփույն, շղթայուեցաւ կարօտով
Հոգւոյն տենչանքն անընդհատ:

Գունատ ճակատն հանգչեցուցած դառնօրէն
Գիշերներու ծոցին վրայ,
Լուսընկայէն հայեց լանջքով հըրեղէն
Բոյր մը վարդեր անթառամ:

Թեւերուն մէջ, հովին նըման, մարեցաւ
Գեղանի կոյսը թոռմած.
Սէրը չեղաւ հուր եւ ժլպիտ, այլ ծարաւ
Եւ խօլ հառաչ մը անդարձ:

Սիրուած սիրտեր ուրիշներուն ժպտեցան,
Ինքը գրկեց ըստուերներ.
Արցունքի ծով մը եղաւ, ո՛հ, աննըման,
Իր մեծ հոգին անընկեր:

Նայեցաւ կոյս աստղերուն, բիլ երկնքին,
Եւ կրակէ սէրն իր լացաւ.
Շուրջն անանուն սօսաւիւններ երգեցին
Դատարկութիւն, մահ ու ցաւ:

ԹԱՂՈՒԱԾ ՍԵՐ

Երգեց քերթողն
Ի՞նչ բուրումներ ըզգլիւիչ,
Ի՞նչ նայուածքներ կախարդական աչքերու,
Ժպտող լուծիւնը շրթներու կուսական,
Որ սիւքին հետ ծաղիկներէն, զերդ մեղու,
Եկան թառիլ իր պարտէզի ծառերուն:

Հոգին բոց էր, աստղերուն պէս հըրավառ,
Եւ թեւ ունէր թիթեռնիկի գոյներով,
Կ'այրէր ճակատն անուրջներով անըսպառ,
Ու կը թռչէր սէր ու հրճուանք փնտռելով:

Կը մենանար թաւուտքի մէջ լըսելու
Ձայնը սիրոյ կարկաչահոս առուակէն,
Բայց կը սառէր յանկարծ արցունքն աչքերու,
Ու կը դադրէր վըտակն անոյժ երգելէն:

Սեւ, անդուլթ բախտ. աչքն յառեցաւ դադաղի.
Եւ ցուրտ հողեր լեցուցին սիրտը դատարկ.
Քար մը ճերմակ լոկ յիշատակ սիրողի,
Զինքը բաժնեց իր երազէն կարմրորակ:

ՊԱՏՐԱՆՔԻ ԺԱՄԵՐ

Օր մը Դուրեան սլարտէզն էր,
Ու կը դիտէ՛ր հիացած...

Վարդեր եկան համբոյրի
Կոյսին ամբիժ այտերուն,
Տժգունեցան մի առ մի
Ու մեկնեցան չըւարուն:

Եկան յետոյ շուշաններ,
Հաղիւ դըպան ձեռքերուն՝
Ճերմակն իրենց, թրթռուն սէր,
Հազաւ տըխուր դալկութիւն:

Բիւ կապոյտն ալ երկնքին
Պարտըւած էր իր գեղէն,
Եւ ամպ կապած երեսին՝
Ծածկեցաւ հոն աչքերէն:

Ալեմտաղի զեփիւռին
Շունչն այնպէս չէր փայփայուն՝
Ինչպէս ծամերը կոյսին,
Լի բուրումով մը օծուն:

Այնպէս անոյշ չէր երգեր
Աղբիւրն հեղիկ, մենաւոր,
Ինչպէս զիւ ձայնն հեշտասէր
Ամբիժ կոյսին տարփաւոր:

Վերջալոյսին հետ նեւաղուն
Շողերու պէս խոյս տըւին
Համբոյր, ծաղիկ, բոյր խօսուն,
Ու սըգաց սիրտ քերթողին:

ԴԻԴԹՈՂ ՍԶՔԵՐ

Վոսփորի ափին, ժպտուն երկինքով
Ձոյգ մը աչքեր վառ՝ իրեն նայեցան.
Նայուածքն այրեց զինքն ամպերու կայծով
Եւ փունջ մը վարդեր ոտքին տակ ինկան:

Պուրակը լեզու առաւ հոն իսկոյն,
Սիրատենչ սրտեր դրկեցին զիրար.
Իրիկուան ցոլքեր լողեցան նոր գոյն,
Բացին երազին դռներն անբարբառ:

Երկինքը կապոյտ կ'ըլլար հովանի,
Ջընաղ առագաստ կարմիր սրտերու,
Ուր մենացաւ սէրն առանց երկիւղի,
Աստղերէն բերկրանք եւ լոյս մուրալու:

Առուակը վըճիտ եղաւ սրտակից,
Գաղտնիք մը չըկար ջուրին տակ խօսուն,
Սուղուեցան դէմքեր յատակին ամբիժ
Եւ երեւցան զոյգ ճակատներ տրոփուն:

Շունչը Եդեմին կը դըգուէր այտեր,
Ջեփիւռը ինչպէս՝ վարսերը կոյսին,
Ու կ'երգէր քնարն հըրեղէն լարեր.
Ծով մ'էր հեշտանքի սիրտը Դուրեանին:

ԱՀԱՒՈՐ ԴՐԺՈՒՄ

Երկնքի վարդեր՝ աչքերը կոյսին,
Իրենց խորութեան մէջ վառ ժպիտներ.
Ճակատը պայծառ՝ կապոյտէն անդին
Անհունով հըճուող կամար անըստուեր:

Ո՞վ չէր հըմայուեր այդ սեւ աչքերէն,
Սիրոյ անդունդէն որ միշտ կը վառէր.
Եւ սիրտն ալ երգող վըտակ հըրեղէն,
Որուն քով քերթողն անոյշ կը սահէր:

Հեղանազ դլխուն մաղերն ալեծուփ՝
Կ'իջնէին քունքէն ջրվէժի հանդոյն,
Ձօղեղու կեանքին, դերդ ծիածան սուրբ,
Սիրտն իր անապատ՝ յոյզով տոչորուն:

Կը հեւա՛ր քընարն անոր ձեռքին տակ,
Ձեփիւռին նըման իրիկուան պահուն.
Գոյներու ովկիան, հրավառ արուսեակ,
Բանաստեղծութիւն՝ կեանքով պատարուն:

Երկինքն այն անամպ՝ դռաց սաստկադին,
Աչքերը դարձան շանթի հարուածներ.
Փոթորիկ մ'անցաւ վարսերէն՝ դէմքին,
Մըթաղենցաւ սէրն, ծածկեցին ամպեր:

«Սիրել չես կրնար դիս», թշուառ քերթող,
Ճըւաց սիրող ձայնն յանկարծ վատօրէն.
Դուն տրամութիւն, դուն լըռութիւն տանջող,
Մահուան կը նային բիրբրըդ արդէն:

Մոխրացա՛ւ հոգին, թափուր եւ ունայն.
Դողդոջուն շրթները դուրս հայցեցին,
Քընարին լարեր լացին ողբաձայն,
Ու դիչերն եղաւ դալկահար լուսին:

Ո՞վ դիտցաւ կարգալ բնաւ սի՛րտը կոյսին,
Որ կը բանայ իր լեզուով, արցունքով
Երկինք մը պայծառ կամ սարսուռն չիբիմ,
Ու կ'անցնի անհոգ սիրտեր փշրելով:

✽

ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

(Անճրելի պահում)

Տեղա՛յ, տեղա՛յ բարի անձրեւ,
Ցաւերուս լերկ դաշտերուն վրայ.
Տեղայ չիթ չիթ, սուրբ ու թեթեւ
Արցունքներու պէս արծաթեայ:

Հոգիս կ'այրի սիրոյ շանթէն,
Սարսուռ հագած տիւ ու դիչեր.
Ոչ ոք դիտէ թէ մարդերէն
Ինձ կը հասնին ի՛նչ հարուածներ:

Ծառ ու ծաղիկ, գետ ու լըճակ
Ինձ սրտակից եղբայր եղան.
Լացին իմ ցաւը շարունակ
Մըտեմութեամբ անզուգական:

Շրթունքս ի վար, պասքած սէրէ,
Ի՛նչքան քաղցր է էջը կաղէոյր
Կաթիլներուդ ցօղ սատափէ,
Եւ կախարդանքդ հեղահամբոյր:

Հոսէ՛ տրտում հոգւոյս վերեւ,
Խաղաղ սփոփանքդ ու մայրութիւն,
Ո՛վ բարեգութ քաղցր անձրեւ,
Ցամքած սրտիս կենդանութիւն:

Տապը խօսքի ու նայուածքի
Այրեց սերմերը հանճարիս,
Թողուց ճամբուն վրայ լըքումի,
Պատանութիւնս ու ցուրտ հոգիս:

Ո՛վ խոհանքներ իմ սըլացիկ,
Որ թռաք գացիք խելակորոյս,
Ո՛վ մանկութեան իմ թիթեռնիկ՝
Որ սրտիս վրայ մեռար անյոյս:

Ա՛յս, պիտ'ապրի՞մ ես նորոգուած,
Պիտի ժպտի՞ն ինձ վերըստին
Արշալոյսին շողերն, Աստուած,
Եւ սրտիս վրայ ալ վարդն Յոյսին:

Կ. Պալիս, Օգոստ. 1972

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ